ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

« » 2022 թ. N

Ձեր 17.03.2022
№ 01.1/5-1/4572-2022

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Կից Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի ֆինանսավորման համար դրամաշնորհի տրամադրման մասին» համաձայնագրի նախագծի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան հիմնավորումը:

Առդիր՝ 5 էջ:

3/21/2022

X

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: SARGSYAN RUBEN 1909770124 Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մարիետա Սարգսյան
Արտաքին կապերի վարչություն
/+37410 56 37 91/+37499 941493

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զբաղվածության ոլորտում թիրախային և ճշգրիտ քաղաքականության մշակումը և այդ քաղաքականության իրացման արդյունքում ազգաբնակչության շրջանում կայուն զբաղվածության ապահովումը ցանկացած երկրի սոցիալական պաշտպանության ոլորտի առաջնահերթություններից է, քանի որ նշված խնդրի լուծումը, գործազրկության ցածր ցուցանիշի առկայությունը և դրա մակարդակի աստիճանական նվազեցումը խոսում է տվյալ երկրում քաղաքացիների սոցիալական վիճակի բարելավման և կենսամակարդակի բարձրացման մասին: Ժամանակակից աշխարհում այս գործընթացի կազմակերպումը և իրագործումը հնարավոր չէ պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներգրավման, ինչը զգալիորեն արագացնում է առկա բիզնես-գործընթացների աշխատանքը՝ այդպիսով էապես բարձրացնելով ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը:

ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում զբաղվածության քաղաքականության իրացման և իրականացվող ծրագրերի հասցեականությունն ապահովելու նպատակով դեռևս 2003 թ. մշակվել և զբաղվածության թվով 51 տարածքային մարմիններում ներդրվել է ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներն իրականացնող (Գործ) տեղեկատվական համակարգի լոկալ տարբերակը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած նորարարական հնարավորություններին համապատասխան՝ 2004 թ.-ին սկսվել են ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներն իրականացնող «Գործ» ինտերնետային տեղեկատվական համակարգի մշակման աշխատանքները, որի հիմքում դրվել էր 1997 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Բնակչության զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ենթաօրենսդրական ակտեր, այլ իրավական ակտեր: 2004 թ.-ից առ այսօր տեղեկատվական համակարգում պարբերաբար իրականացվել են ծրագրային ապահովման աշխատանքներ, որոնց

շնորհիվ տեղեկատվական համակարգում մշակվել և ներդրվել են նոր գործառույթներ՝ ՀՀ զբաղվածության ոլորտի օրենսդրական կարգավորումներին համապատասխան։ Այսպիսով, տեղեկատվական համակարգը առ այսօր գործել է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի լոկալ ցանցում, ինչը նշանակում է, որ համակարգը հասանելի է եղել միայն զբաղվածության թվով 51 տարածքային մարմիններին։ Տեղեկատվական համակարգի շահագործման նախընթաց ժամանակահատվածում այս հանգամանքը էապես սահմանափակել է համակարգի շահագործման հնարավորությունները՝ ՀՀ քաղաքացիներին զբաղվածության ոլորտում ծառայությունների հասանելիության և մատուցման առումով, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացու կողմից զբաղվածությանն առնչվող անհատական կաբինետի ձևավորում, անհատական տվյալների կառավարում, ոլորտի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության, ծանուցումների ու համապատասխան ծառայությունների առցանց եղանակով ստանալու հնարավորություն։ Այս խնդիրը առավել ակնհայտ դրսևորվեց 2020 թ.-ին մասնավորապես՝ COVID-19 համավարակի պայմաններում, երբ աշխատանք փնտրող, գործազուրկ քաղաքացիները, ինչպես նաև գործատուները չունեին հասանելիություն համապատասխան ծրագրային գործիքին՝ առցանց եղանակով զբաղվածության տարածքային մարմինների կողմից համապատասխան ծառայություններ ստանալու համար։ Առցանց ծրագրային գործիքի մշակման անհրաժեշտության ևս մեկ նախադրյալ հանդիսացավ ԵԱՏՄ «Աշխատանք առանց սահմանների» միասնական որոնողական համակարգի մշակումը և ներդրումը, որի հետագա զարգացման պլանին համապատասխան աշխատանքներն իրականացնելու համար ճկուն և համապարփակ ազգային բաղադրիչի առկայությունը ժամանակի հրամայական է։ Խնդիրը բազմիցս քննարկվել է ՀՀ նախկին փոխվարչապետ Տ. Ավինյանի մոտ, և վերջինիս կողմից ևս կարևորվել է զբաղվածության ոլորտը կարգավորող համապատասխան հարթակի և տվյալների շտեմարանի ստեղծումը, որը մշակված կլինի նորագույն տեխնոլոգիաներով և կստեղծի ամուր հիմք զբաղվածության ոլորտում նորարարությունների ներմուծման և ոլորտի շարունակական կարգավորման համար։

Այսպիսով, Աշխատանքի էլեկտրոնային բորսայի նախագծման, մշակման և ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ

թվում՝ **բովանդակային**, **տեխնիկական** և **ինտեգրացիոն**, որոնք թույլ կտան լուծել ներկայումս առկա մի շարք խնդիրներ, բավարարել ՀՀ զբաղվածության ոլորտին առաջադրվող մի շարք պահանջների:

Բովանդակային առումով Աշխատանքի էլեկտրոնային բորսայի նախագծման, մշակման և ներդրման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության՝ 19.06.2017 թ. թիվ 646 որոշմամբ հաստատված 2017-2022 թթ. միջոցառումների ծրագրից: Այս համատեքստում Աշխատանքի էլեկտրոնային բորսայի առկայությունը հնարավորություն կտա առավել ընդլայնել աշխատանք փնտրողների, գործազուրկների և գործատուների փոխհաղորդակցման հնարավորությունները զբաղվածության ոլորտում, վերջիններիս թույլ կտա լիարժեք ներգրավված լինել ոլորտի նորարարություններին և իրականացվող ծրագրերին՝ այդպիսով նպաստելով գործազրկության մակարդակի նվազեցմանը:

Տեխնիկական տեսանկյունից Աշխատանքի էլեկտրոնային բորսայի նախագծման, մշակման և ներդրման անհրաժեշտությունը բխում է ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների պարտադրած կանոններից և պահանջներից: Ներկայումս ՀՀ զբաղվածության ոլորտում շահագործվող «Գործ» տեղեկատվական համակարգը նախագծվել և մշակվել է դեռևս 2004 թ. ակտուալ տեխնոլոգիաներով: Նախընթաց ժամանակահատվածում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը զարգացում է ապրել երկրաչափական պրոգրեսիայով՝ բիզնես-գործընթացների ավտոմատացման պրակտիկայում գործածության մեջ դնելով նոր, ավելի ճկուն և լայն հնարավորություններ ընձեռող լուծումներ, միաժամանակ գործածությունից դուրս մղելով արդեն հնացած տեխնոլոգիաները: Նման պայմաններում ՀՀ զբաղվածության ոլորտում շահագործվող «Գործ» տեղեկատվական համակարգի հիմքում դրված տեխնիկական մասնագրերը առավել քան հնացած են և զգալիորեն սահմանափակում են բիզնես-գործընթացների ավտոմատացման հնարավորությունների շրջանակը՝ այդպիսով ՀՀ զբաղվածության ոլորտը տեխնոլոգիական առումով հետ շպրտելով միջինում 10 տարի: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում սա անհավանական և անթույլատրելի բացթողում է:

Ինտեգրացիոն զարգացումների համատեքստում Աշխատանքի էլեկտրոնային բորսայի նախագծման, մշակման և ներդրման անհրաժեշտությունը բխում է այն

միջպետական գործընթացներից, որոնցում ներառված է Հայաստանի Հանրապետությունը: Այդ գործընթացները թելադրում են բովանդակային և տեխնիկական առումով լինել պատրաստ և ինտեգրվել ձևավորվող տարածաժամանակային իրողություններին: Մասնավորապես՝ ԱՊՀ երկրների միասնական աշխատաշուկայի ձևավորման հայեցակարգի շրջանակներում Աշխատանքի էլեկտրոնային բորսայի առկայությունը այն նախադուռն է, որն ապահովելու է նշված աշխատաշուկայի ձևավորման հնարավորությունը: Աշխատանքի էլեկտրոնային բորսայի առկայությունն անհրաժեշտ է նաև Եվրասիական տնտեսական միության ինտեգրացիոն գործընթացներում լիարժեք ներգրավվելու և միասնական աշխատաշուկայի ձևավորման աշխատանքներին որպես լիարժեք անդամ մասնակից դառնալու համատեքստում:

Այսպիսով՝ Աշխատանքի էլեկտրոնային բորսայի նախագծումը, մշակումը և ներդրումը կապահովի հետևյալ հիմնական արդյունքները՝

– Առցանց ծառայությունների մատուցում ՀՀ քաղաքացիներին և գործատուներին՝ անհատական կաբինետի համապարփակ գործիքակազմի ապահովմամբ,

– Հանրության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում,

– Բիզնես-գործընթացների թափանցիկության, արդյունավետության և հասցեականության բարձրացում,

– Հաշվետվողականության հնարավորությունների ընդլայնում՝ վերլուծությունների և վիճակագրական նյութերի ձևավորման մոդուլի կիրառմամբ,

– Տեխնոլոգիական իրավիճակի բարելավում, նորարարական տեխնոլոգիաների կիրառում,

– Ինտեգրելիության ապահովում՝ տվյալների փոխանակման մոդուլի կիրառմամբ

Ելնելով վերոգրյալից՝ **«Աշխատանքի էլեկտրոնային բորսա»** դրամաշնորհային Համաձայնագրի հաստատումը կամ վավերացումը համարվում է նպատակահարմար: